

2011 ԹՎԱԿԱՆԻ ԵՊՀ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԱՍԻՆ

2011 թվականի նախահաշիվը հավասարակշռված է և կազմում է 7,663,000.0 հազար դրամ: Եկամուտները նախորդ տարվա նկատմամբ ավելանում են 6.5 տոկոսով, իսկ ծախսերը՝ 3.5 տոկոսով:

1. Նախահաշվի մուտքերը ավելացել են 467,740.0 հազար դրամով: Եկամուտների ցուցանիշները ավելանում են նախորդ տարվա նկատմամբ բոլոր հոդվածներով, մասնավորապես.
 - 1.1 Վճարովի ուսուցման ծառայությանից՝ 122,940.0 հազար դրամ, որից.
 - 1.1.1 Ավելացել է բակալավրիատի հեռակա ուսուցման ծառայություններից եկամուտները՝ ի հաշիվ այն բանի, որ ավելացել է մեկ կուրս (909 ուսանող): Հաշվի առնելով այն, որ հաջորդ ուսումնական տարի նախատեսվում է ընդունելություն այս ուստարվա 22 տոկոսի չափով, այնուամենայնիվ եկամուտները գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը 176,425.0 հազար դրամով:
 - 1.1.2 Ավելացել է նաև հեռակա ուսուցման մագիստրատուրայի մեկ կուրս, ինչպես նաև երեք մասնագիտություն, որի արդյունքում նախորդ տարվա ցուցանիշը ավելացել է 129,380.0 հազար դրամով կամ կրկնակի չափով: Արդյունքում հեռակա ուսուցման եկամուտները ավելացել են 305,805.0 հազար դրամով: Ուսուցման ծառայությունների գծով մնացած եկամուտները նախորդ տարվա նկատմամբ նվազել են. հաշվի առնելով հաջորդ տարվա դիմորդներ չունենալու հանգամանքը՝ առկա ուսուցման համակարգի եկամուտները նվազել են նախորդ տարվա նկատմամբ 182,865.0 հազար դրամով:
 - 1.1.3 Ուսանողների ընդհանուր թիվը կազմում է 19,166՝ ներառյալ Իջևանի մասնաճյուղի ուսանողները /1,727-Իջևան/: Ուսման վարձի միջին չափը ԵՊՀ-ում 1 ուսանողի հաշվարկով կազմելու է 341.8 հազար դրամ:
 - 1.2 Պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումները՝ 118,882.0 հազար դրամով, գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի շրջանակներում: Բարձրագույն կրթության ֆինանսավորումը նվազել է նախորդ տարվա նկատմամբ, սակայն նվազումը կատարվել է 2010 թվականի նախատեսված ցուցանիշներում: Դա պայմանավորված է 2010/2011 ուստարվա

ընդունելության ցուցանիշների հետ, իսկ 2011 թվականի ֆինանսավորումը պահպանվել է 2010 թվականի նկատմամբ:

- 1.3 Գործառնական այլ եկամուտներ՝ ներառյալ ԱԱՀ՝ 5,918.0 հազար դրամ. այս հոդվածով հիմնականում ավելացել են ԵՊՀ Ծաղկածորի ուսումնասիրտադրական բազայի ծառայությունների եկամուտները՝ 10,000.0 հազար դրամով, ատամնաբուժարանի ծառայությունների եկամուտները՝ 5,300.0 հազար դրամով, նվազել են ընդունելության քննությունների կազմակերպման ծառայությունների եկամուտները՝ 8,000.0 հազար դրամով:
- 1.4 Ոչ գործառնական եկամուտները՝ 220,000.0 հազար դրամով. այս հոդվածով ավելացել է դրամաշնորհային ծրագրերից եկամուտները՝ 120,000.0 հազար դրամով կամ կրկնակի չափով. այն պայմանավորված է արդեն գործող «Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում» տարածաշրջանային մագիտրոսական ծրագրով, որի գործողության ժամկետը երեք տարի է: Նվիրատվությունները՝ 90,000.0 հազար դրամով, որը պայմանավորված է լաբորատոր սարքավորումների ձեռքբերման համար ստացվող բարեգործական եկամուտներով:
2. Ծախսերը ավելանում են 261,320.0 հազար դրամով: Այստեղ 15 հոդվածների ցուցանիշներ ավելանում են, իսկ 7 հոդվածներինը՝ նվազում:
- 2.1 Աշխատանքի վարձատրության ծախսերը ավելանում են 1.4 տոկոսով. այս հոդվածով նախատեսվել է ԵՊՀ հիմնական բոլոր աշխատակիցների աշխատավարձի բարձրացում՝ 5.0 հազար դրամով: Նվազագույն աշխատավարձը համալսարանում կկազմի 45.0 հազար դրամ: Աշխատակիցների տարեկան միջին թիվը կազմում է 3,120 մարդ, որից հիմնական աշխատողներ՝ 2,820: Ամսական միջին աշխատավարձը կազմում է 105.5 հազար դրամ: Պահպանվում են դասախոսական կազմի հավելավճարները տարբերակված աշխատավարձի և հեռակա ուսուցման եկամուտների մասով:
- 2.2 Կրթաթոշակի ֆինանսավորումը նվազում է 6.2 տոկոսով /16,050.0 հազար դրամ/, քանի որ նվազել է անվճար համակարգի ուսանողների թիվը: Սակայն ավելանում են անվանական կրթաթոշակները, որոնց մի մասը վճարվում է դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում:
- 2.3 Վճարումները պետական բյուջե նվազում են 40,370.0 հազար դրամով. այս հոդվածում նվազել են սոցիալական

- ապահովագրության վճարները և տարածքի վարձակալության համար բյուջե վճարվող գումարները:
- 2.4 Կոմունալ ծախսերը ավելացել են 24,800.0 հազար դրամով, որտեղ հիմնականում ավելացել են գազի ծախսերը՝ հաշվի առնելով 2011 թվականի թանկացումները:
- 2.5 Փոստի և կապի ծախսերը նվազել են 4,000.0 հազար դրամով. այս հոդվածով նվազել են հեռախոսակապի ծախսերը, նախատեսվել է միջքաղաքային, միջազգային և բջջային զանգերի համար նախատեսված էլքերի կրճատում: Նվազել է նաև ինտերնետի ծախսը՝ հաշվի առնելով մեկ միավորի գնի նվազումը 2010 թվականից:
- 2.6 Գրասենյակային ապրանքների ծախսերը ավելացել են 3,800.0 հազար դրամով, ինչը պայմանավորված է դրամաշնորհային և գիտական գործունեության ծրագրերով:
- 2.7 Ապրանքանյութական պաշարների ծախսը ավելացել է 13,750.0 հազար դրամով: Այս հոդվածում ավելացել է նոր ենթահոդված՝ համակարգչային պարագաներ: Ելնելով այն բանից, որ այն համարվում է ընթացիկ ծախս, այդ պատճառով առանձնացվել է համակարգչային գույք և պարագաներ հոդվածից, որը նախորդ տարում արտահայտված էր ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման հոդվածով: Ավելանում է նաև սննդային ապրանքների ծախսը՝ հաշվի առնելով, որ միջոցառումների համար նախատեսված գումարները արտահայտված են այս ընդհանուր տողում, իսկ նախորդ տարվա նախահաշվում միջոցառումների համար նախատեսված ծախսերը արտահայտված էին առանձին տողերով, բացի այդ՝ ավելանում են նաև պրակտիկա մեկնող ուսանողների խմբերը, ինչի պատճառով էլ ավելանում են սննդամթերքի ձեռքբերման ծախսերը:
- 2.8 Տրանսպորտային ծախսերը ավելացել են 4,900.0 հազար դրամով, այստեղ հաշվի է առնված վառելիքի գնի բարձրացումը /20 դրամ նախորդ տարվա նկատմամբ/, ինչպես նաև տրանսպորտի վարձակալության ծախսերը, որը պայմանավորված է միջոցառումների համար նախատեսվող այդ ծախսով, այն նախորդ տարում արտահայտված էր առանձին տողերում:
- 2.9 Ծառայությունների ձեռքբերման ծախսերը ավելացել են 21,000.0 դրամով: Այստեղ նախատեսվել է շրջանավարտների դիպլոմների տպագրության ծախսերը ամբողջությամբ կատարել վճարովի ուսուցման ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին, այսինքն՝ շրջանավարտներից դիպլոմի գումար չի գանձվի:

- Ավելացել են նաև նոր ենթահողվածներ, մասնավորապես կառուցվածքային ստորաբաժանումների միջոցառումների համար նախատեսվող հյուրասիրությունների և հյուրանոցային ծառայությունները, մասնագիտական կազմակերպություններում կազմակերպվող արտադրական պրակտիկայի համար ծախսերը, գիտաժողովների կազմակերպման ծառայությունները: Այս հողվածները ևս խմբավորվել են մեկ տողով. դրանք նախորդ տարում արտահայտված էին առանձին միջոցառումների տողերով:
- 2.10 Ներկայացուցչական ծախսերը կրճատվել են 5,000.0 հազար դրամով:
- 2.11 Անդամավճարների ծախսերը գրեթե պահպանվել են նույն չափով, կրճատվել են 700.0 հազար դրամով:
- 2.12 Վարձակալության ծախսերը ավելանում են 2,445.0 հազար դրամով, այս հողվածով էլ նախատեսվել է նոր ենթահողված՝ տեխնիկայի, լուսարձակների, բեմական պարագաների և այլ գույքի վարձակալություն, որոնք նախորդ տարում արտահայտված էին միջոցառումների տողերով:
- 2.13 Գործուղման ծախսերը ավելացել են կրկնակի չափով. այստեղ արտահայտված են պրակտիկա մեկնող ուսանողների և դասախոսների ծախսերը, գիտական գործունեության նպատակով և դրամաշնորհային ծրագրերով նախատեսված գործուղման ծախսերը:
- 2.14 Նպատակային ֆինանսավորումների ծախսերը ավելացել են 43,120.0 հազար դրամով, այն նախատեսված է դրամաշնորհային ծրագրերով և գիտական գործունեության ֆինանսավորումներով՝ ենթակառուցվածքների պահպանման և զարգացման ծրագրերով:
- 2.15 Համաֆինանսավորման ծախսերի դրամաշնորհային ծրագրերին մասնակցելու նպատակով նախատեսվել է 40,000.0 հազար դրամ: ԵՊՀ-ում վերջին հինգ տարիների ընթացքում զգալի չափով ավելացել են դրամաշնորհային ծրագրերը, այդ ծրագրերը շահելու նպատակով անհրաժեշտ է լինում ԵՊՀ-ի մասնակցությունը որոշ չափով, այդ պատճառով նախատեսվել է այս հողվածը:
- 2.16 Գրադարանային ծախսերը ավելացել են 15,000.0 հազար դրամով, ինչը նախատեսված է դրամաշնորհային ծրագրերի նախահաշիվներում:
- 2.17 Իջևանի մասնաճյուղի ֆինանսավորման չափը պահպանվել է գրեթե նույն չափով նախորդ տարվա նկատմամբ:

2.18 ՔԵՆԴԼ գիտահետազոտական ինստիտուտի ծախսերը ավելացել են 61,000.0 հազար դրամով, այն նախատեսված է գիտական գործունեության նպատակով ստացվող ֆինանսավորումներում:

2.19 Այլ ծախսերը ավելացել են կրկնակի չափով /49,000.0 հազար դրամով/. այն պայմանավորված է Համահայկական երիտասարդական հիմնադրամին վճարվող գումարով, որով նախատեսված է ուսանողական միջոցառումների ծրագրերի ֆինանսավորում: Սակայն, բացի այդ, ԵՊՀ նախահաշվով նախատեսված են մշակութային միջոցառումներ՝ 7,000 հազար դրամի չափով, շրջանավարտների հետ տարվող աշխատանքների և կարիերայի զարգացման միջոցառումներ՝ 1,900.0 հազար դրամի չափով, ուսանողական գիտական ընկերության ծրագիր՝ 1,600.0 հազար դրամի չափով, ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվող միջոցառումներ՝ 8,500.0 հազար դրամի չափով: Արդյունքում գրեթե ամբողջությամբ պահպանվել են ուսանողական միջոցառումների համար նախատեսված նախորդ տարվա գումարները, որին կավելանա Համահայկական երիտասարդական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող միջոցառումները: Բացի նշված ծրագրերից և միջոցառումներից՝ նախատեսված է նաև կրթական բարեփոխումների ծախսեր՝ 8,000.0 հազար դրամի չափով, պրակտիկայի ծախսեր՝ 28,234.0 հազար դրամի չափով, հասարակայնության և լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքների ծրագրեր՝ 24,900.0 հազար դրամի չափով:

2.20 Ծնորհների, ծրագրերի և միջոցառումների ծախսերը նախորդ տարվա նախահաշվում առանձին տողերով արտահայտված մշակութային միջոցառումների /10,000.0 հազար դրամ/, կրթական բարեփոխումների /8,000.0 հազար դրամ/, շրջանավարտների հետ տարվող աշխատանքների և կարիերայի զարգացման միջոցառումների /2,500.0 հազար դրամ/, հասարակայնության և լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքների /2,000.0 հազար դրամ/, ուսանողական միջոցառումների /10,000.0 հազար դրամ/, պրակտիկայի /21,000.0 հազար դրամ/ և դրամաշնորհային ծրագրերով /52,500.0 հազար դրամ/ նախատեսված ծախսերն են, որոնք այս տարվա նախահաշվում խմբավորված են ըստ տնտեսական դասակարգմամբ ծախսային հոդվածների, սակայն տեսանելի լինելու համար արտահայտված են առանձին հավելվածներով:

- 2.21 Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսերը ավելացել են 143,000.0 հազար դրամով, որից 100,000.0 հազար դրամը ավելացել է լաբորատոր սարքավորումների ձեռքբերման տողին, և դրա ֆինանսավորումը նախատեսված է եկամուտներ նվիրատվություններից հոդվածով: Մնացած հոդվածների ավելացումը պայմանավորված է դրամաշնորհային և գիտական գործունեության ծրագրերով, իսկ տրանսպորտային միջոցների գնման նպատակով նախատեսվող գումարները կրճատվել են:
- 2.22 Հիմնանորոգման և շինարարական ծախսեր հոդվածներով ևս կատարվել են կրճատումներ. այստեղ հիմնականում հիմնանորոգման ծախսերը ուղղվելու են թիվ 7 ուսումնական մասնաշենքի /սպիտակ շենք/ նորոգմանը, իսկ կենտրոնական մասնաշենքի նորոգման ծախսերը նախատեսված են դրամաշնորհային ծրագրով:
- 2.23 Ֆակուլտետների համար նախատեսված գումարները պահպանվել են նախորդ տարվա չափով, մեկ բացառությամբ, որ ուսանողական միջոցառումների ծախսերը այս տարվանից ղեկավարվում են Ուսանողական խորհրդի կողմից:
- 2.24 Ստորաբաժանումների ծախսերը ավելացել են, մասնավորապես տնտեսական մասի ծախսերում ներառված են մասնաշենքերի պահպանման նպատակով կատարվող ծախսերը՝ տնտեսական ապրանքներ, շինանյութեր, լամպեր և լուսարձակներ, այլ ապրանքանյութական պաշարներ: Ծախսերը բաժանված են ըստ մասնաշենքերի, որոնց համար պահանջագրերը ներկայացվում են ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորին համապատասխան մասնաշենքերի պարետների կողմից: Հրշեջ ծառայության ծախսերը ևս զգալի չափով ավելացել են, ինչը պայմանավորված է հակահրդեհային համակարգերի և պարագաների ձեռքբերումներով: Մնացած ստորաբաժանումների ծախսերը պահպանվել են նախորդ տարվա չափով, իսկ ավելացումները խիստ հիմնավորված են եղել ստորաբաժանումների ղեկավարների կողմից:
- 2.25 Ներկայացված են նաև առանձին կառուցվածքային ստորաբաժանումների և լրացուցիչ կրթական դասընթացների եկամուտները և ծախսերը առանձին-առանձին. այդ ծախսերը կատարվում են ինքնաֆինանսավորման եղանակով:
- 2.26 Կազմակերպության ծախսերի 16.5 տոկոսը կազմում է կազմակերպության զարգացման ծախսերը, 83.5 տոկոսը՝ պարտադիր հետևյալ ծախսերը.

- 2.26.1 Աշխատավարձի ծախսեր,
- 2.26.2 Կրթաթոշակի ծախսեր,
- 2.26.3 Վճարումներ պետական բյուջե,
- 2.26.4 Կոմունալ ծախսեր,
- 2.26.5 Փոստի և կապի ծախսեր,
- 2.26.6 Պրակտիկայի ծախսեր,
- 2.26.7 Նպատակային ֆինանսավորումների ծախսեր,
- 2.26.8 Իջևանի մասնաճյուղի ֆինանսավորման ծախսեր,
- 2.26.9 ՔԵՆԴԼ ինստիտուտի ֆինանսավորման ծախսեր,
- 2.26.10 Դրամաշնորհային ծրագրերի ծախսեր,
- 2.26.11 Գիտական գործունեության ծրագրերի ծախսեր: